

«Գյոււմրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

Մասնագիտությունը

«Վարսավիրական արվեստ և զարդարային
դիմահարդարում»

Մոդուլի անվանումը՝

«Մազերի քիմիական գանգրացում»

Արդյունք1. Տարբերակել մազերը գանգրացնող նյութերը

Թեմա1.1Մազերը գանգրացնող նյութերը և դրանց նշանակությունը:

Մարդիկ դեռ հնուց փորձել են գանգրացնել իրենց մազերը: Հին Հռոմի և Եգիպտոսի կանայք իրենց մազերը փաթաթում էին փայտիկների վրա, դրանց ֆուսմ ջրի և բնահողի հատուկ խառնուրդ և երկար ժամանակ չորացնում արևի տակ: Արդյունքում ստացվում էին խոպոպիկներ, սակայն դրանք դիմացկուն չէին և արագ ֆանդվում էին: Հին Հունաստանում մազերը գանգրացնելու համար օգտագործում էին երկաթյա ձող, որը կոչվում էր «կալամիս»:

Միջին դարերում լայն տարածում ուներ կեղծամների գանգրացումը: Մարդիկ կեղծամների մագափնջերը փաթաթում էին փայտիկների վրա և եփում հիմնային հեղուկի մեջ: Ստացվում էին ամուր խոպոպիկներ, որոնք իրենց տեսքը պահպանում էին նույնիսկ ջրի հետ շփվելիս: Դա գանգրացման առաջին փորձն էր: Սակայն այս մեթոդը կիրառելի չէր բնական մազերի համար:

Գանգրացման առաջին գործիքը հայտնաբերել է ֆրանսիացի Մարսելը: Նրա պատրաստած գործիքի շնորհիվ հնարավոր էր ստանալ բնականին մոտ գանգուր մազեր:

1897 թվականին այդ մեթոդի մասին առաջին անգամ գրվում է հատուկ ամսագրերում: Մեկ տարի անց գործիքի ստեղծողը արդեն միլիոնատեր էր, իսկ փաթուկները վաճառվում էին աշխարհի տարբեր անկյուններում:

1880-1890 թթ. տաք գանգրացման տեխնիկան տարածվում է խոշոր ֆաբրիկներում՝ Լանդոնում, Պետերբուրգում, Ժնևում և այլն: Սակայն այս մեթոդի կիրառման արդյունքում ստացվում էին ֆիչ դիմացկունություն ունեցող խոպոպիկներ:

1905 թ. գերմանացի Կարլ Նեսլերը կարողանում է ստանալ խոպոպներ, որոնք երկար ժամանակ պահպանում էին իրենց ձևը: Նա հայտնաբերում է մազերի գանգրացման նոր տեխնիկան՝ պերմանենտը, որը հնարավորություն էր տալիս գանգրացված մազերը պահել վեցամսյա ժամկետում:

Նա իր գյուտը հրապարակում է: Սակայն այդ հորարարությունը նրա ոչ բոլոր գործընկերների հավանությանն է արժանանում: Պատահառն այն էր, որ այդ գործիքով աշխատելը անհարմարություն էր ստեղծում. գործիքը տափանում էր ամբողջությամբ, և նրանք ստիպված էին աշխատել այդ տափ գործիքով: 1909 թ. Նեսլերը սկսում է կիրառել էլեկտրական տափացուցիչներ: Այս գաղափարը ընդունվում և փնտրվում է ամբողջ աշխարհում:

Տարիների ընթացքում գանգրացման համար նախատեսված էլեկտրական փաթուկներն ավելի ու ավելի էին կատարելագործվում: Սակայն դրանք ունեին իրենց բացասական կողմերը՝

- z չափսերով մեծ էին.
- z հնարավորություն չէին տալիս գործընթացի ժամանակ կառավարել մազերի գանգրացման աստիճանը.
- z աշխատում էին տափացման միայն մեկ ուղիով:

Առաջանում է ավելի կատարելագործված մեթոդներ ստեղծելու գաղափար, որն իրականացվեք ոչ թե հատուկ սարքերի, այլ բնական նյութերի

կիրառմամբ:

1

1935 թ. գործում էր առանց սարքերի կիրառման գանգրացման երկու երաժիշտավորված տեսակ: Առաջ է գալիս նոր եզրույթ՝ «սառը գանգրացում»:

Այն ուներ մի շարք առավելություններ՝

- z կախված չէր էներգիայի սնման աղբյուրից /մարմնի ջերմությունը բավարար էր, որպեսզի նյութն արագ գործեր/.
- z հնարավորություն ուներ կարգավորելու մագի գանգրացման աստիճանը՝ տարբեր տրամագծով կոկլյուսների օգնությամբ.
- z հնարավորություն էր տալիս գանգուրն ստանալու հենց մագարմասից.
- z հնարավորություն էր տալիս գանգրացնելու ցանկացած երկարություն և կառուցվածք ունեցող մագեր:

Սառը ֆիմիական գանգրացման մեթոդը դուրս մղեց բոլոր մյուս մեթոդները և հասավ մինչև մեր օրերը:

Մագերի ֆիմիական գանգրացումը որպես գործընթաց

Այս արարողակարգի արդյունքում ուղիղ մագերն ալիքաձև են դառնում: Սակայն պետք է նշել, որ ֆիմիական գանգրացման ժամանակ մագերը խիստ սուժում են, որովհետև ուղիղ մագերը գանգուր տեսք են ստանում՝ մագերի կառուցվածք թափանցող ֆիմիական ուժեղ միջոցների անմիջական ազդեցության տակ:

Գոյություն ունի ֆիմիական գանգրացման մի ֆանի տեսակ՝

1. Հիմնային /սա ամենադիմացկուն ֆիմիան է/: Մագերի թեփուկները բացվում են՝ հնարավորություն տալով ֆիմիական նյութերին թափանցելու մագի ներսը: Գանգրացման այս տեսակը պահպանվում է մինչև 6 ամիս:
2. Թփուլային /սա մագերի վրա թողնում է վափուկ ազդեցություն և ի տարբերություն հիմնային գանգրացման՝ չի խախտում մագերի կառուցվածքը: Սակայն այն երկարատև չէ, ուստի 4-6 շաբաթ հետո հարկավոր է կրկնել այս արարողակարգը:
3. Չեզոք /սա գանգրացման իդեալական տարբերակ է/: Իր բաղադրությամբ և կառուցվածքով այն մագերի վրա թողնում է վափուկ ազդեցություն՝ դրանց հաղորդելով բնական տեսք:

Քիմիական գանգրացում կատարվում է հետևյալ ձևով՝ սկզբում կոկլյուսների վրա փաթաթվում են թաց մագերը /խոնավ մագերն ավելի արագ են ներծծում ֆիմիական նյութը/, իսկ հետո նոր դրանք թրջվում են ֆիմիական նյութով: Իսկ եթե փաթաթման ընթացքում մագերը չորանում են, ապա խոնավացվում են հեղուկացրի միջոցով: Այս մեթոդի ժամանակ մագերը փաթաթվում են ցանկացած ուղղությամբ: Այն հարմար է կիրառել միջին և կարճ մագերի համար:

Քիմիական գանգրացումից հետո խորհուրդ է տրվում մագերը մի ֆանի օր չլվանալ փրփրոհառով կամ բալզամով: Խորհուրդ չի տրվում նաև մագերը ենթարկել ֆիմիական գանգրացման, երբ դուք հիվանդ եք կամ մագերը ներկել եք բնական ներկանյութերով/բասմա, հինա/:

Քիմիական գանգրացումն իրականացվում է երեք փուլով՝

1-ին փուլում իրականացնում են ֆիմիական ազդեցություն՝ ֆիմիական բաղադրության կիրառմամբ և ֆիզիկական ազդեցություն՝ կոկլյուսների կիրառմամբ:

2-րդ փուլում իրականացնում են ֆիմիական ազդեցություն. ֆիսսաթի օգնությամբ ամրապնդվում են նորից ձևավորվող կամրջակները:

3-րդ փուլում կատարվում է չեզոքացում. կերատինն է ամրապնդվում:

Քիմիական գանգրացման սկզբունքը: Երբ մազերը փաթաթում են վարսափաթաթուկներով կամ կոկլյուսներով, դրանք ենթարկվում են ֆիզիկական ազդեցության, ծոմովում են և ընդունում գանգուր ձև: Կերատինի ծայրային կամրջակները խտոնվում են, բայց չեն նեղվում: Սանրվածքը պահպանում է իր տեսքը մինչև հաջորդ լվացումը կամ մի սրտ ժամանակ: Խոնավության և մեխանիկական ազդեցությունների հետևանքով խոսպոպների առածգականությունը թուլանում է և դրանք կորցնում են իրենց սկզբնական ամրությունն ու կոկիկությունը:

Իդեալական տարբերակ է, երբ ծծմբային կամրջակների նեղումը 30% է, ինչն էլ թույլ է տալիս ստանալ ձիգ, կաշուն գանգուր՝ պահպանելով մազի սրակը: Սա նշանակում է, որ միջին հաշվով ամեն երրորդ կամրջակ պետք է նեղվի:

Դրա համար շատ կարևոր է ինչպես ֆիմիական նյութերի ճիշտ ընտրությունը, այնպես էլ նախատեսված ժամանակի հեզքիտ պահպանումը: Օրինակ՝ եթե աշխատել են բարձր խտություն ունեցող ֆիմիական նյութերով և երկարացրել են աշխատանքի համար նախատեսված ժամանակը, ապա մազը կլինի թույլ, զգայուն և լավ չի պահի անհրաժեշտ ձևը: Իսկ եթե վերցրել են թույլ խտություն ունեցող ֆիմիական բաղադրություն և կրճատել ֆիմիան կատարելու ժամանակը, ապա այդպիսի գանգրացումը ևս չի կարող երկար դիմանալ:

Ֆիսսատորի ազդեցության տակ ծծմբային կամրջակները վերականգնվում են, և մազերը ձեռք են բերում իրենց նախկին առածգական հատկությունները:

Հիմնայնություն և թթվայնություն: Հիմնային կամ թթվային լուծույթների ֆիմիական ցուցիչը արտահայտվում է pH-ի միջոցով, որի արժեքի ընդգրկման սահմանը սանդղակի վրա Օ-ից մինչև 14-ն է: Չեզոք մաշուր ջրում pH ցուցիչի արժեքը համապատասխանում է 7-ի, որը սանդղակի միջին գոտին է: 7-ից ցածր pH ցուցիչ ունեցող լուծույթը թթվային է, իսկ 7-ից բարձրի դեպքում՝ հիմնային:

Հիմնային լուծույթն առաջացնում է մազերի փափկություն և ուռածություն, իսկ թթվայինի դեպքում՝ կոշտություն:

Գոյություն ունեն գործիքներ և հատուկ բաղադրություն ունեցող թղթե ինդիկատորներ, որոնք հնարավորություն են տալիս սրտելու տարբեր լուծույթներում pH ցուցչի պարունակման աստիճանը: Օրինակ՝ եթե այդ թղթից մի կտոր ընկղմենք ազոտաթթվի աղային լուծույթի մեջ, ապա կնկատվի թղթի մգացում/հիմնային միջավայրում/, իսկ թթվային միջավայրում գույնի փոփոխություն չառ ֆիչ է նկատվում կամ էլ իսպառ բացակայում է: Եթե մազերը թրջեն ջրով ու ստուգեն pH-ը, ապա ստացված ցուցիչը կընդգրկի 4,4-5,5 սահմանը, որն էլ կհամապատասխանի թույլ թթվային

փոխադրության չափաֆանակին: Հիմնային կողմնորոշմամբ ֆիզիական գանգրացման համար նախատեսված բաղադրություններ ունեն մոտ 10pH 3 իսկ չեզոքացված նյութերում թթվային ցուցիչը մոտ է այս ցուցիչը տեղաբաշխված է սանդղակի թթվային մասում:

Մինչև վարսահարդարը չուսումնասիրի հաճախորդի մազերի վիճակը և նախօրոք չիմանա կոսմետիկ արարողակարգերի ժամանակ կիրառվող նյութերի տվյալները, խորհուրդ չի տրվում օգտագործել լուծույթներ, որոնք ունեն 7-ին մոտ pH: Չտեղեկացված լինելը կարող է վնասել հաճախորդի մազերը:

Բաղադրանյութեր` քիմիական գանգրացման համար:

Համարյա բոլոր գանգրացնող լոսյունները ստեղծվում են թեոօրգանական միացություններից, որոնք ազդում են մազերի կառուցվածքի վրա և փոխում դրանք` մարդու մարմնի նույնիսկ նորմալ ջերմաստիճանի դեպքում:

Քիմիական բաղադրության կարևոր ցուցիչ է pH-ը: Ինչքան սա բարձր է, այնքան ակտիվ է մազերի վրա ֆիզիական ազդեցությունը, այնքան բարձր է կամքջակների լրիվ ճեղքումը և մազերի կերատինի լուծումը:

Հիմնային ֆիզիական գանգրացում: Հիմնային պերմանենտը դասական բաղադրություն է, որի հիմնական բաղադրիչը թեոգլիկոլային թթուն է, որն առաջացել է ամոնիակի և թեոգլիկոլային թթվի փոխադրության միջոցով: Սա օգտագործվում է բնական և առողջ մազերի գանգրացման դեպքում` առաջացնելով առաձգական խոպոպ: Գանգրացման համար նախատեսված հիմնային բաղադրությամբ լոսյուններում pH-ը կազմում է 8,2-9,9` կախված ամոնիակի քանակից: Այս բաղադրությունն արագ է ներծծվում մազերի մեջ, քան թթվային-հավասարակշռողը: Երբեմն հիմնային ֆիզիական գանգրացում իրականացնում են` խառնելով ֆիզիական բաղադրության հետ ջուր: Այս դեպքում մազերի համար կպահանջվի պլաստիկ գլխարկ, իսկ մյուսի դեպքի համար` ոչ:

Հիմնային ֆիզիական գանգրացման առավելությունն այն է, որ արդյունքում ստացվում են երկար պահպանվող ամուր խոպոպներ, իսկ թերությունը, որ արտագատում է ծծմբաջրածնի վնասակար գազեր, որոնք թափանցելով մարդու շնչառական օրգաններ` կարող են առաջացնել տարբեր կողմնակի երևույթներ` գլխացավ, դող, դերմատիտ: Ուստի պետք է խիստ հետևել, որ սրահը հաճախակի օդափոխվի:

Դասական հիմնային նյութերի ազդեցությունն այնքան էլ վնասակար չէ մազերի համար շնորհիվ պարունակվող այն նյութերի, որոնք բուժում են վնասված մազերը և բուլացնում են ֆիզիական բաղադրանյութի ազդեցությունն այդ մասերի վրա:

Գանգրացման փափուկ հիմնային պերմանենտ: Այս լուծույթում պարունակվող ամինաթթուները մազերին վնաս չեն հասցնում: Քիմիայի ժամանակ մազերը ստանում են պրոտեինային բուժում, որից էլ լավանում է վնասված մազերի կառուցվածքը, և գանգրացումն ավելի երկար ժամանակ է պահպանվում: Դեղամիջոցը համարյա անհոտ է, մաշկին և շնչառական օրգաններին ոչ մի վնաս չի հասցնում: Սակայն ալերգիայի առաջացման

ոխակի գործունն այս դեպքում ավելի բարձր է, քան հիմնային բաղադրանյութի ժամանակ:

4

Թթվային-հավասարակշռող բիմիական գանգրացում: Չեզոք և թթվային-հավասարակշռող բաղադրանյութերն ի հայտ են եկել 1970 թ.: Սրանք չեն պարունակում ուժեղ հիմքեր, հետևաբար մազերի համար քիչ փաստակար են: Այդ բիմիական բաղադրանյութի գլխավոր բաղադրիչը գլիցերոլի միաթեոզլիկոլատն է: Նյութն սկսում է գործել այն ժամանակ, երբ խառնվում է ակտիվանյութի հետ: Այդ ժամանակ տեղի է ունենում բիմիական փոխադրեցությունը, որն ուղեկցվում է մեծ քանակի ջերմության անջատմամբ՝ բաղադրությունը տաքացնելով մինչև 40°C և արագացնելով գանգրացման գործընթացը: Այս լուծույթներում pH-ի պարունակությունն ավելի քիչ է/5-7/, քան հիմնայինում: Թթվային բաղադրությամբ լուսյուններում pH-ը կազմում է 4,5-6,5: Բաղադրությունը մազերի մեջ ներծծվում է դանդաղ, քան հիմնայինը, այդ պատճառով մազերի մշակման ժամանակը երկարում է: Օգտագործվող ջերմության աղբյուրները երկուսն են՝ մեկը ինքն բիմիական գանգրացման փոխադրեցությունն է/ էկզոթերմիկ մեթոդ/, իսկ մյուսը՝ «կլիմազոն» սարքը /էնդոթերմիկ մեթոդ/:

Թթվային-հավասարակշռող բիմիական գանգրացման ենթարկվում են բնականից փուխր, դյուրաբեկ կամ ներկված մազերը: Որպեսզի ստացվեն բնականին մոտ խոպուպներ կամ ալիքներ՝ սանրվածքի հիմքում պետք է ընկած լինի բիմիական գանգրացումը:

Այս գանգրացման թերությունը կայանում է նրանում, որ թթվային հիմքի վրա իրականացվող բիմիական գանգրացումն այնքան էլ ամուր չէ, ի տարբերություն դասականի /հիմնային հիմքի վրա/: 4-6 շաբաթ հետո մազերը դառնում են նվազ փարթամ:

Թթվային-հավասարակշռող բաղադրության ազդեցությունը հիմնայինից ավելի փափուկ է, սակայն խոպուպն էլ ավելի քիչ առածգական է լինում, քանի որ թթվային-հավասարակշռող բաղադրությունը մազ է թափանցում ավելի դանդաղ, և գանգրացման գործընթացը տևում է քիչ երկար:

Չեզոք բիմիական գանգրացում: Ինչպես և հիմնային հիմքով գանգրացումը, ունի 7,4 pH ջրածնային ցուցիչ, սակայն դրա ազդեցությունն ավելի անփաստ է, քան թթվային հիմքով բիմիական նյութինը:

Քիտնականները գանգրացման այս տեսակը մշակեցին՝ հաշվի առնելով մազերում, այսպես կոչված, հիդրոֆիլային գոտիների /ջուրը շեղող, խոտորող/ առկայությունը: Այդ գոտիները գանգրացման հետևանքով առաջացած ավելուրդ հեղուկը հեշտ կլանում են: Այն պաշտպանում է զգայուն գոտիները, որի ժամանակ առողջ մազերն սկսում են ավելի ակտիվորեն ներծծել հեղուկը: Արդյունքում մազերը լրացուցիչ սթրես չեն ապրում, քանի որ չափից շատ չեն ուռչում:

Չեզոք բիմիական գանգրացումը հարմար է այն հանախորդների համար, որոնց մազերը բիմիական գանգրացումից հետո դարձել են փշուտ, անհարթ և ունեն պաշտպանման կարիք:

Հատուկ կերտոնային համախումբը բիմիական գանգրացման ժամանակ հարթեցնում է եղջերաճերտում առաջացած փաստվածությունը և հոգ է տանում մազերի առածգականության և կայունության մասին:

Գանգրացման ժամանակակից միջոցների տեսականին լայն է, ընտրության հնարավորությունը՝ մեծ: Կան հիմնային բաղադրություններ մազերի

գունաթափման համար և թրվահաշվեկշռային՝ կոետ, չենթարկվող մագերի համար: Դրանցից յուրաքանչյուրը տալիս է փայլուն արդյունք, եթե

5

ընտրությունն ու հրահանգները ճիշտ են կատարված:

Քիմիական նյութի /պերմանենտի/ընտրությունը

Քիմիական նյութերի /թրվահաշվեկշռային կամ հիմնային/ ընտրությունը մեծապես կախված է այն մագի տեսակից, որն անհրաժեշտ է գանգրացնել:

Մագի տեսակը	Պերմանենտի տեսակը
Կոետ դիմադրող	հիմնային կամ ջրահիմնային լոսյոն
Բարակ դիմադրող	հիմնային կամ ջրահիմնային լոսյոն
Նորմալ	ջրահիմնային կամ թրվահաշվեկշռային լոսյոն
Նորմալ ծակոտկեն	ջրահիմնային կամ թրվահաշվեկշռային լոսյոն
Նորմալ զգայուն	թրվահաշվեկշռային լոսյոն
Ներկած ծակոտկեն	ջրահիմնային կամ թրվահաշվեկշռային լոսյոն
Ներկած ծակոտկեն	թրվահաշվեկշռային լոսյոն
Սպիտակած, մասամբ ներկած	թրվահաշվեկշռային լոսյոն
Գունաբացված և ներկած	թրվահաշվեկշռային լոսյոն
Գունաթափված	թրվահաշվեկշռային լոսյոն

Տիքսատրներ՝ քիմիական գանգրացման համար

Որպեսզի ստացված խոպոպները երկար պահպանվեն, հարկավոր է կիրառել բաղադրանյութեր, որոնք ունեն օֆսիդացնող հատկություններ:

Քիմիական գանգրացումից հետո օգտագործվող բոլոր ֆիֆատորները պարունակում են ջրածնի պերօֆսիդ 3 %-անոց: Դրա ազդեցությամբ մագերի ներքին կապերը վերականգնվում են՝ ձեռք բերելով նախկին հատկությունները:

Ֆիզատորները լինում են խտացված /կոնցենտրացված/ և շխտացված /չկոնցենտրացված/:

Խտացված. բացում են ջրով՝ 1:1 հարաբերությամբ և տուփի վրա կա գրառում՝ «1+1»:

6

Եթե այսպիսի նեանակում չկա, ապա ֆիզատորը կոնցենտրացված չէ, այսինքն՝ պատրաստ է օգտագործման համար:

Փրփրուն լուծույթը լցնում են սպունգի վրա և ֆուն մազերին: Հարկավոր է լավ փրփրացնել, քանի որ ֆիզատը հենց փրփուրն է:

Ոչ փրփրուն նյութը սրվակից ֆուն են յուրաքանչյուր կոկլյուսի վրա:

Եթե պատահում է այնպես, որ ձեռքի տակ վարսահարդարը չունի պատրաստի ֆիզատոր, ապա այն նա կարող է պատրաստել՝ օգտագործելով 30 տակոսանոց ջրածնի պերօֆսիդ: Այդ լուծույթը ստանալու համար հարկավոր է 5 գ ջրին խառնել 5 գ փրփրոհող և 40 գ ջրածնի պերօֆսիդ: Երկար մազերի ֆիզացիայի համար լուծույթի քանակը կարելի է կրկնապատկել:

Քիմիական գանգրացման արագ ու թյուկ նը և գանգոկրի առած գական ու թյուկ նը

Քիմիական գանգրացման ժամանակ մազը ենթարկվում է ֆիզիկական և ֆիզիկական ազդեցությունների: Կոկլյուսների վրա փաթաթելիս մազը ձգվում է, բացի դրանից՝ յուրաքանչյուր շերտ սկսում է ճնշել իր ներքևի շերտին: Այսինքն՝ մազի վրա ազդում է երկու ուժ՝ ձգում և ճնշում: Սակայն սա դեռ բավարար չէ, որ մազը փոխի իր ձևը: Այս բացը լրացնում է ֆիզիկական նյութը: Գանգրացման ժամանակ ջերմաստիճանի բարձրացմանը գուրդըրաց մազի ցանկացած ձև ընդունելու հատկությունն ավելի մեծանում է: Ուստի գանգրացման ժամանակ կիրառվում է տաքացնող գլխարկ, որը պահպանում է մարդու մարմնի բնական ջերմաստիճանը:

Որպեսզի բարձրացնենք օրգանիզմի ջերմաստիճանը, կարելի հաճախորդին առաջարկել խմելու տաք թեյ կամ սուրճ: Իսկ եթե նրա ներքին ջերմությունը բավարար չէ, ապա կարելի է օգտագործել «կլիմազոն», որն էլ արտաբերված կապահովի հավելյալ ջերմություն:

Երկհատեր մազերի դեպիում չարժե հավելյալ ջերմություն հաղորդել կամ գլխարկ կիրառել:

Մազի շրջանառության դեպի ձվածեղի անցման արագությունը կախված է՝

1. ֆիզիկական բաղադրության տեսակից /այսինքն դրա խտությունից /կոնցենտրացիայից/.
2. մազերի կառուցվածքից.
3. պահելու ժամկետից.
4. շրջակա միջավայրի ջերմաստիճանից:

Կոկլյուսների տրամագծերը ոչ մի ձևով չեն կարող ազդել այդ ձևավոր խումբների ընթացքի վրա: Դրանից կախված է միայն խոպոպի առաձգականության աստիճանը:

Հարցեր

Ներկայացրե՛ք ֆիզիկական գանգրացման գարգացման պատմությունը:

Ինչպե՞ս է կատարվում մագերիի ֆիմիական գանգրացման տեխնոլոգիան:

Նկարագրե՛ք ֆիմիական գանգրացման սկզբունքները:

Ի՞նչ բաղադրանյութեր են կիրառում ֆիմիական գանգրացման համար:

Ի՞նչ կապ ունեն ճիշտ հրահանգները ֆիմիական գանգրացման գործընթացում:

Ի՞նչ նշանակություն ունեն ֆիմիական գանգրացման համար:

Նշե՛ք ֆիմիական գանգրացման արագությունը և գանգուրի առած-գականության կապը:

Թեմա 1.2 Գանգրացնող նյութերով աշխատելու հաջորդականությունը:

Մագերիի քիմիական գանգրացման կատարման փուլերը

Քիմիական գանգրացումը կատարվում է հետևյալ հաջորդական փուլերի կատարմամբ՝

1. Գլուխը լվալ փրփրոհառով: Մագերը սրբիչով չորացնել՝ ֆամելով խոնավությունը:
2. Եթե կարիք կա՝ մագերը կտրել:
3. Ընտրել ֆիմիական բաղադրությունը և այն մագերին ֆսելու մեթոդը:
4. Մագերը փաթաթել կոկլյուսով:
5. Ներծծել ֆիմիական բաղադրանյութով:
6. Հագցնել տափացնող գլխարկ: Կարելի է ծածկել նաև պոլիէթիլենային տոպրակով, և գլուխը փաթաթել սրբիչով:
7. Պահել ժամանակը:
8. Ստուգել մագերի գանգրացման որակը:
9. 5-7 րոպե գլուխը լվալ տափ ջրով՝ չհանելով կոկլյուսները:
10. Առաջին ֆիմսում /5-8 րոպե/
11. Հանել կոկլյուսները /վարսափաթաթուկները/:

12. Երկրորդ ֆիխսում /5 րոպե/:
13. Ֆիխսածը լվալ տաք ջրով, ջուրը ֆամել:
14. Ցայել մազերը թթու բաղադրանյութով՝ ֆիխսածը չեզոքացնելու համար:
15. Մազերը սրբիչով չորացնել:
16. Մազերին ֆուել բուժական դեղամիջոց /Եթե դրա անհրաժեշտությունը կա/՝ մազերի կառուցվածքը վերականգնելու համար:

Մազերի վիճակի և գլխամաշկի որակում: Մինչև ֆիմիական գանգրացում իրականացնելը հարկավոր է ուսումնասիրել հաճախորդի մազերն ու գլխամաշկը: Մաշկի արյունատար անոթների վնասվածքների, մաշկային հիվանդությունների առկայության դեպքում գանգրացում իրականացնել չի թույլատրվում: Եթե հաճախորդն ալերգիկ է, ապա հարկավոր է նրան թեստավորել՝ նախքան տվյալ դեղամիջոցն օգտագործելը: Ալերգիկ ռեակցիան շատ արագ ի հայտ է գալիս՝ ախտաբանական, նուրբ մաշկի կամ արմուկի ծալման տեղում: Քիմիական բաղադրությունը բամբակով ֆսում են մաշկի այդ հատվածին: 10-15 րոպե հետո կարելի է որոշել հաճախորդն ալերգիկ է այդ նյութի նկատմամբ, թե՛ ոչ: Եթե մաշկի վրա հայտնվում են կարմրություն և ուռածություն, ապա նշանակում է, որ ֆիմիական գանգրացման այդ նյութերից օգտվել չի կարելի:

Գանգրացումից առաջ վատ չէր լինի թեստավորել նաև մազերը: Դա հատկապես վերաբերում է գունազրկված մազերին: Եթե դրանք պոկվում են չոր վիճակում, ապա ֆիմիական գանգրացումը դրանց հակացուցված է: Կա նաև մազերի որակը ստուգելու մեկ այլ եղանակ: Մի փոքրիկ մազավունջ կարելի է տեղավորել ֆիմիական բաղադրության մեջ և պահել 10 րոպե: Եթե դրանից հետո մազերը կորցնում են իրենց ամրությունը և պոկվում են, ապա դրանք կարող են չդիմանալ ֆիմիական գործընթացի ծանրությունը: Այս դեպքում ավելի լավ է գանգրացում չիրականացնել:

Եթե շփակներ մազերը գանգրացման համար նախատեսված ֆիմիական բաղադրության մեջ ընկղմելուց հետո չեն պոկոտվում, բայց դրանց արտաֆին տեսքը փոքր-ինչ փոխվում է, ապա կարելի է բաղադրությունը խառնել ջրի հետ 1:1 հարաբերությամբ:

Հինայով ներկած մազերը գանգրացման չեն ենթարկվում, ֆանի որ հինան ունի պնդացնող հատկություններ: Հինան մազերը հաստացնում է և թույլ չի տալիս ֆիմիական բաղադրությունը ներծծվի: Որպեսզի մազերն ազատեն հինայից, հարկավոր է կատարել սպիրտայնության թրջոցներ: մազերը թրջել 70 տոկոսանոց սպիրտի լուծույթով, սակայն դա անել շատ զգույշ, որպեսզի կաթիլները չընկնեն գլխամաշկի վրա և պահել 5-10 րոպե: Հետո մազերին ֆուել որևէ բուսական յուղ և գլուխը ծածկել պալիէթիլէնային տոպրակով, պահել 30 րոպե և լվալ մազերը՝ յուղոտ մազերի համար նախատեսված վերփոփոխումով: Եթե ցանկալի արդյունքի չի լինում, ապա կարելի է այն կրկնել:

Կա նաև հեռույալ տարբերակը. մազերին ֆուել ֆիխսացիայի լուծույթը և պահել 10-15 րոպե, այնուհետև լվանալ:

Մազերի լվացումը ֆիմիական գանգրացումից առաջ: Քիմիական գանգրացումը կատարվում է մաքուր մազերի հետ, ուստի դրանք հարկավոր է նախապես լվանալ՝ անկախ լվացման ժամկետից: Մազերի մաքուր վիճակը նպաստում է թեփուկների հեշտ բացվելուն, ինչն էլ արագացնում է

ֆիմիական գործընթացը: Մազերը պետք է լվանալ մեկ անգամ. գլխամաշկը չմերսել, որպեսզի նարպազերտը պաշտպանենք թթվային և հիմնային ավելորդ ազդեցություններից: Մազերը թերևս կի չորացնում ենք սրբիչով, այնուհետև սանրում: Սակայն ոչ լվանալուց առաջ, ոչ էլ հետո չօգտագործել մազերի խոզանակ՝ կուտիկուլան չվնասելու համար:

Մազերի նախնական կտրում: Բոլոր տեսակի հստակ, երկրաչափական ձևերով կտրվածքները կատարվում են մինչև ֆիմիական գանգրացումը: Սակայն եթե մազերը շատ երկար են, ապա ֆիմիական գանգրացումից առաջ անհրաժեշտ է կատարել նախնական կտրում՝ ընտրած երկարության չափից փչ երկար: Պետք է հիշել, որ ֆիմիական գանգրացումից հետո մազերը որոշակի չափով կարճանում են: Նախնական կտրվածքի ժամանակ պետք է ֆիլիքովիայի ենթարկել մազերի ծայրերը, քանի որ մազերի երկարությունների բնական տարբերությունը խախտված է, իսկ միևնույն երկարություն ունեցող մազերը դժվար է վաթաթել կոկլյուսների վրա: Քիմիական գանգրացումից հետո կատարվում է վերջնական կտրում՝ մազերի չորացած ծայրերը հեռանելու նպատակով: Հակառակ դեպքում դրանք սանրելը դժվար կլինի, և մազերը կունենան անփուլթ տեսք:

Գործնական աշխատանք

Հանախորդը ցանկանում է իր մազերը ենթարկել ֆիմիական գանգրացման:

Ինչից պետք է սկսել ձեր աշխատանքը: Նշի՛ր ճիշտ պատասխանը.

- միանգամից կանցնեն աշխատանքի կատարմանը.
- հանախորդին սուրճ կառաջարկեն.
- կստուգեն մազերի որակը:

Ներկայացրո՛ւ ֆիմիական գանգրացման փուլերը:

Թեմա 1.3 Մազերը գանգրացնող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները:

Գրգռված գլխամաշկ. օգտագործվել է չափից շատ ֆիզիկական բաղադրություն, որը չներծծվելով՝ հոսել է գլխամաշկի վրա:

Կոստրված մազեր. մազերը փաթաթելու ժամանակ չափից շատ ձգվել են՝ միաժամանակ ձգելով և վնասելով մազաբնույթները:

Չգանգրացված մազափնջերը. մազերը բաժանվել են մեծ մազափնջերի և օգտագործվել են ֆիշ կոկլյուսներ:

Թույլ խոպոպ. օգտագործվել է հին բաղադրություն, չի պահպանվել ֆիքսացիայի համար նախատեսված ժամանակը, օգտագործվել են խոշոր կոկլյուսներ:

Նշված ժամանակից շատ մնացած գանգրացում. բաղադրության պահպանման ժամանակը նախատեսվածից շատ է մնացել, խախտվել են ֆիքսածը ֆուելու կանոնները /պակաս խնամքով և արագ/:

Մազերի գույնի փոփոխում. օգտագործվել է մետաղական սպասք կամ գործիքներ, որոնք փոխադրության մեջ են մտել բաղադրության հետ՝ թողնելով մազերի վրա մետաղային նստվածք՝ առաջ բերելով գունավախում:

Չստացված ֆիզիկական գանգրացում. շենֆային սառը պայմաններ, սոված վիճակ, ցածր ճնշում, հղիություն:

Հարցեր

Թվարկել մազերը գանգրացնող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները:

Արդյունք 2. Կատարել մազերի գանգրացում ըստ հրահանգի

Թեմա 2.1 Գանգրացման ժամանակ կիրառվող գործիքների, օժանդակ պարագաների և նյութերի ընտրություն:

Քիմիական գանգրացման համար անհրաժեշտ են հետևյալ գործիքներն ու պարագաները՝

- z անջրաթափանց թիկնոց.
- z պոչիկով սանր.
- z տարբեր տրամագծով կոկլյուսներ /50-80 հատ/.
- z գանգրացման համար բաղադրանյութ և ֆիքսատոր.
- z գանգրացման համար նախատեսված թղթեր.

- z տաճարացի գլխարկ.
- z պնակ և սպունգ՝ նախատեսված ֆիզատորի համար.
- z պաշտպանիչ ձեռնոցներ.

z վարսավարաթուղիներ կամ կոկլյուսներ՝ նախատեսված հասարակ կամ ֆիզիական գանգրացման համար:

Գործնական աշխատանք

Կատարել գործիքների, օժանդակ պարագաների և նյութերի ընտրություն:

Թեմա 2.2 Մազերի նախապատրաստում գանգրացման:

Գործնական աշխատանք

Նախապատրաստված աշխատանքներ

- Դրանք իրականացվում են հետևյալ կերպ՝
- z աշխատատեղի նախապատրաստում.
- z հանախորդի տեղավորում.
- z գրույց հանախորդի հետ՝ կատարվելիք աշխատանքների շուրջ.
- z ձեռքերի լվացում և գործիքների ախտահանում.
- z հանախորդին ծածկոցով ապահովում.
- z գլխի հիգիենիկ լվացում:

Անհրաժեշտ հարմարանքներն են՝

- z երկու ոչ մետաղական պնակ. մեկը՝ բաղադրության, մյուսը՝ ֆիզաթի համար.
- z երկու սպունգ. փոքրը՝ բաղադրության, մեծը՝ ֆիզաթի համար.
- z ապլիկատորներ.
- z ձեռնոցներ.
- z չափաբաժակ.
- z տաճարացի գլխարկ.
- z կոկլյուսներ.
- z թուղթ:

Թեմա 2.3 Մազերի գանգրացում:

Մազերի փաթաթումը կոկլյուշների վրա

Կոկլյուշների տրամագծի ընտրությունը կախված է մազերի որակից և ընտրած գանգրացման աստիճանից: Որքան փոքր է վարսափաթաթուկի տրամագիծը, այնքան փոքր են խոպոպները, և հակառակը՝ որքան մեծ է վարսափաթաթուկի տրամագիծը, այնքան մեծ ու փափուկ են խոպոպները: Բարակ կոկլյուշները առաջացնում են մանր, ձիգ ալիքներ: Որքան մեծ է կոկլյուշների տրամագիծը, այնքան խոշոր են ստացվում ալիքները, սակայն այս դեպքում մազերի առածգականությունը նվազում է:

Կոկլյուշները կարող են լինել ուղիղ և կոր (կենտրոնին մոտ ավելի նեղ, դեպի ծայրերը լայնացող ձող):


Եթե կոկլյուշն ուղիղ է, ապա խոպոպիկը ստացվում է համաչափ, իսկ եթե այն կոր է, ապա խոպոպիկը մազափնջի ծայրերի մոտ ավելի գանգրացած է, քան մազարմատների հատվածում:

Կոկլյուշների ընտրության ժամանակ կողմնորոշիչ է այն հանգամանքը, որ գանգրացման արդյունքում առաջացած ալիքը հավասար է կոկլյուշի տրամագծի կեսին:

Կոշտ, առածգական մազերն անհրաժեշտ է փաթաթել խոշոր կոկլյուշների վրա՝ բարակ մազափնջերով: Միջին առածգականության մազերը փաթաթում են միջին տրամագիծ ունեցող փաթաթուկի վրա՝ միջին հաստությամբ ունեցող մազափնջերով:

Հաստակ ուժեղություն պետք է դարձնել բարակ մազերին. որքան բարակ են մազերը, այնքան քիչ է նրանց գանգրվածն ու առածգականությունը: Այդպիսի մազերը պետք է փաթաթել մանր կոկլյուշների վրա, բարակ մազափնջերով:

Եթե մազերը չափազանց բարակ են, ապա անհրաժեշտ է մազափնջերը առանձնացնել ոչ թե ուղիղ, այլ զիգգագանման բաժուկներով, իսկ կոկլյուշները կարելի է տեղաբաշխել շախմատային կարգով: Փաթաթվող



Մազերի
փաթաթումը
կոկլյուշների
վրա:

*Մազերի ծայրերի
փաթաթումը
հատուկ թղթի
վճռոցով:*

մազափնջերը խնամֆով առանձնացվում են երկար պոչիկով սանրի օգնությամբ: Դրանք սանրվում են, ձգվում գլխի նկատմամբ ուղղահայաց և փաթաթվում վարսափաթաթուկի վրա:

Հատկապես խնամֆով պետք է փաթաթել մազափնջերի ծայրերը, որպեսզի դրանք մազերի ընդհանուր զանգվածից դուրս չցցվեն: Այդ նպատակով կարելի է օգտագործել մազերի ծայրերը փաթաթելու համար նախատեսված հատուկ թուղթ, որը հեշտացնում է մազերի փաթաթումը ֆիմիակաճ գանգրացման ժամանակ:

Մազափունջը կոկլյուշի վրա փաթաթելիս հարկավոր է, որ այն շատ չլարվի և չձգվի, քանի որ նյութի ազդեցության տակ մազափունջը փափկում է և երկայնֆով ձգվում: Ուստի կոկլյուշների վրա մազափնջերի թույլ փաթաթումը ստեղծում է լարվածության այնպիսի աստիճան, որն անհրաժեշտ է մոլեկուլյար կապերի ազատ տեղաշարժման համար: Կոկլյուշների վրա մազափնջերի ձիգ փաթաթումը և ֆիմիակաճ բաղադրության փափկեցնող միաժամանակ ազդեցությունը կարող են առաջացնել այնպիսի ուժեղ լարվածություն, որը կհանգեցնի մազերի ձևախեղման /դեֆորմացման/ և վնասման:

Բացի այդ, ձիգ փաթաթված և շատ կիպ դասավորված մազաշերտերը խանգարում են ֆիմիակաճ գանգրացնող և ֆիմսող նյութերի թափանցմանը դեպի ներքին շերտեր:

Մազափնջի հաստությունը և լայնությունը պետք է համապատասխանի կոկլյուշի հաստությանը և լայնությանը:

Մազափնջերի փաթաթման ուղղությունը կախված է երեք գործոնից՝ մազերի անման ուղղությունից, ընտրված սանրվածքից և կտրվածքից:

Եթե հաշվի չառնենք մազերի անման ուղղությունը, ապա կարող են մազերը արմատներից ջարդել:

Կոկլյուսները հարմար է դասավորել այն ուղղությամբ, որ ուղղությամբ որ պետք դրանք լինեն սանրվածքի ժամանակ:

Դա հասե կարագացնի մագերի հարդարման գործընթացը:

Կտրվածքի ձևը կարելի է ընդգծել՝ օգտագործելով տարբեր տրամագծով վարսավաթաթուղկներ, պտտելով դրանք տարբեր ուղղություններով:

Փաթաթման ժամանակ մագափնջերի ձգման անկյունը կարող է տարբեր

լինել. ինչքան բարձր է մագափուլն իր հիմքից ձգված, այնքան այդ հատ-

վածում մագերի ավելի փաթթամ են լինում: Եթե մագարմատներից ծավալ չի պահանջվում, ապա կոկլյուսները պետք է տեղաբաշխել մագափնջի հիմքից ներքև: Սակայն, որպես կանոն, մագափուլն չը ձգվում է գլխին ուղղահայաց, այսինքն՝ կոկլյուսներ լինում են դրա հիմքում: Սա հարմար է շատ սանրվածքների համար:

Փաթթամ սանրվածք ստանալու համար կարն մագերի ծայրերը կարելի է թողնել չփաթթված: Ընդ որում՝ վերջին կոկլյուսը պետք է լինի ավելի խոշոր, որպեսզի ուղիղ մագերից անցումը գանգուրի լինի սահուն:

Կարն մագերի ծայրերը կարելի է հարդարել տավակ խոպոպների ձևով՝ ամրակների կիրառմամբ, իսկ կարն քակատային մագափուլն չը փաթթել մեծ տրամագծով կոկլյուսի օգնությամբ կամ ընդ-



*Մագերի
փաթաթումը
կոկլյուսների
վրա վեր-
նու մ'ուղղահայաց
, նե-րքևու մ'
հորիզոնական:*

հանրապես չփաթաթել: Ծոծրակային գոտում բարակ և թույլ մազերի դեպ-
քում կիրառել ավելի բարակ կոկլյուսներ, որպեսզի գանգուրը չլինի թույլ:

Աստիճանական սանրվածքի ժամանակ, երբ մազերի երկարության
տարբերությունը ակնառու է, ապա փաթաթումը հարկավոր է սկսել երկար
մազերից՝ դրանք անմիջապես թրջելով ֆիմիական գանգրացման համար
նախատեսված բաղադրությամբ: Դրանից հետո փաթաթել մնացած ավելի
կարճ մազերը՝ դրանց ֆուելով ֆիմիական նյութը: Այս ձևով երկար մազերի
պահպանման ժամանակը կլինի ավելի շատ, և գանգրացումը կլինի հա-
մաշափ:

Ամրացնող նկուն ժապավենները պետք է լինեն ոչ շատ ձիգ, չնե՛հեն մա-
զերը և տեղավորված լինեն մազարմատներից հեռու, որպեսզի մազերը
չջարպվեն: Ճկվող ժապավենը պետք է գտնվի վարսափաթաթուկի վերևի
մասում և կարող է տեղակայվել դրան գուգահեռ կամ խաչաձև:

Գանգրացման համար նախատեսված ժամանակակից վարսափաթա-
թուկներն իրենց առանցքային մասում ունեն անցք, որը հնարավորություն
է տալիս օգտագործել ամրակներ՝ մազերն ամրացնելու համար/փայտյա
կամ պլաստմասե/:

Հորիզոնական փաթաթման ժամանակ կոկլյուսների դիրքը հորիզոնա-
կան է մազափնջերի հիմքին համեմատ: Մազերի գանգրացումը տեղի է
ունենում մազերի ծայրերից դեպի հիմքը:

Ուղղահայաց տարբերակի դեպքում մազերը փաթաթվում են հակառակ
ուղղությամբ՝ արմատներից դեպի ծայրերը, և կոկլյուսների դիրքը ուղղա-
հայաց է:

Ուղղահայաց գանգրացման առավելությունն այն է, որ ցանկացած երկար-
ության մազերը գանգրացվում են համաշափ՝ մազերի ամբողջ երկարու-
թյամբ: Իսկ հորիզոնականի դեպքում նույնիսկ մազերի միջին երկարության
դեպքում որակյալ գանգրացում ստացվում է միայն մի քանի սկզբնական
պտույտների վրա: Այն աստիճանաբար թուլանում է, որովհետև ամեն մի
նոր պտույտի հետ աճում է կոկլյուսի տրամագիծը: Ուղղահայաց եղանա-
կով հարմար է գանգրացնել աճած արմատները:

Քիմիական նյութի օգտագործումը մազերի գանգրացման գործընթացում

Երբ բոլոր մազերը փաթաթված են կոկլյուսների վրա, յուրաքանչյուր
փաթաթուկի (վերևից և ներքևից) վրա արագորեն ֆսվում է ֆիմիական
նյութը:

Ձի կարելի միանգամից օգտագործել մեծ քանակությամբ ֆիմիական
նյութ, քանի որ մազերի վերևի շերտերը կլանելով չափազանց շատ խոնա-
վություն՝ ուռչում են և չեն թողնում բաղադրությունն անցնի ներքևի շերտե-
րը: Դրանից մասն էն չգանգրացված, իսկ ֆիմիական նյութն սկսում է հոսել

հաճախորդի գլխի և դեմքի վրայով:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է առաջին
անգամ ֆուել ֆիչ քանակով նյութ, որպեսզի այն
կարողանա աստիճանաբար ներծծվել: Երկրորդ
անգամ փոքր-ինչ ավելացվում է նյութի քանակը,
որպեսզի այն մազերի ավելի խոր շերտերին հաս-



նի: Իսկ երբորդ անգամ այնքան նյութ են քան, մինչև այն դադարի ներծծվել, այսինքն՝ մնա մաշկի մակերեսին: Այս գործընթացի ժամանակ հանախորդին անհրաժեշտ է տալ անձեռոցիկ, որպեսզի հեղուկը հոսելու դեպքում չորացնի: Մազերը

Քիմիական նյութի քսու մը մագերիս:



Քիմիական նյութը քսել ու ց հետո գլխին հագնու մ են տաքացնող գլխարկ:

թրջում են ֆիմիական
նյութով կամ
ֆիքսատորով
թրջելիս կարիք չկա
նյութը խնայել, քանի որ
մա-
գերը պետք է
բավականին լավ
ներծծված լինեն
համապատասխան
նյութով:

Մինչ ֆիմիական
նյութի օգտագործումը՝
ան-

հրաժեշտ է մագերի
անման եզրագծին մոտ
գտնվող մաշկը ծածկել
պաշտպանիչ ֆունկով և
գլխի շուրջը կապել
ոլորած անձեռոցիկ: Երբ
ֆի-

միական նյութն
ամբողջապես ներծծվում
է, այդ

ժամանակ անձեռոցիկը
հանում են: Գլխի վրա
զգուշությամբ հագցվում
է տաքացնող գլխա-

րկ, որպեսզի
փաթարուկները
չտեղաշարժվեն և
ջերմությունը դուրս չգա:

Հարկավոր է գլխարկն
ամրացնել, այլապես
գանգրացման
գործընթա-

ցը ժամանակի առումով
կերկարի: Եթե գանգ-
րացման համար
անհրաժեշտ է հավելյալ
ջեր-

մություն, ապա
օգտագործվում է
«կլիմագոն»

անունը կրող սարքը,

որը նախապես պետք է տաճարները միջին ջերմության և միայն այդ ժամանակ հաճախորդին հրավիրել նստելու սարքի տակ:

Քիմիական նյութի՝ մազերի վրա պահելու ժամանակահատվածը, խիստ անհատական է. այն կախված է մազերի որակից և հաճախորդի ցանկությունից:

Քիմիական գանգրացումը կարող է օգտագործվել տարբեր նպատակներով՝ և՛ իբրև առանձին սանրվածք, և՛ իբրև սանրվածքների հիմք:

Եթե քիմիական գանգրացման ժամանակ օգտագործվել է «կլիմազոն» սարքը, ապա հարկավոր է թողնել, որ մազերը որոշ ժամանակ հանգստանան և հովանան: Դրանից հետո մազերը լվանում են՝ առանց կոկլյուսները հանելու: Մազերի վլացման ժամանակահատվածը կախված է մազերի երկարության չափից:

Մազերի պարզաջրումը քիմիական գանգրացման ժամանակ: Լվացման գործընթացը հարկավոր է կազմակերպել շատ խնամֆով ու մանրագին, քանի որ եթե մազերը լավ չլվացվեն և այնտեղ մնան քիմիական նյութի մնացորդներ, ապա դրանք չեն թողնի, որ ֆիսաստորը լավ ներծծվի և ծառայի իր նպատակին: Մազերի վլացման ժամանակահատվածը կախված է մազերի երկարության չափից:

Մազերի ֆիսում: Ֆիսումը կարևոր փուլ է գանգրացման ժամանակ: Այն վերականգնում է մազերի մնացած կառուցվածքը: Խնամֆով կատարած ֆիսացիայից է կախված գանգրացման վերջնական արդյունքը:

Ֆիսացիայի համար նախատեսված նյութը պատրաստվում է օգտագործելուց անմիջապես առաջ:

Խնամֆով լվանում են մազերը, թեթևակի դրանք չորացնում սրբիչով, քանի որ չափազանց խոնավ մազերը նվազեցնում են ֆիսացիայի ազդեցությունը:

Ֆիսաստորը ֆսելուց հետո, որոշ ժամանակ անց, գոլուցությամբ հանում են կոկլյուսները՝ աշխատելով խոպոպիկը չձգել: Ապա նորից մազերի վրա ֆսում են ֆիսաստոր: Գանգրացումն ավելի լավ արդյունք կունենա, եթե քիմիական նյութը և ֆիսաստորը նույն ֆիրմայի արտադրանք լինեն:



Մազերի և վլացման ժամանակ կոկլյուսները չեն հանում:



Ֆիսաստորի քսումը մազերին:

Ֆիսաստորի ազդեցության ժամանակահատվածը մազերի վրա			
Մազերի երկարությունը, սմ	Լվացման ժամանակահատվածը, րոպե	Ֆիսաստորի ազդեցությունը, րոպե	Ֆիսաստորի ընդհանուր քանակը, մլ
10 սմ-ից	1 ր	/5+3 /ր	70 մլ
10-20 սմ	2 ր	/5+5/ ր	100 մլ
20 սմ-ից ավելի	3 ր	/5+9/ր	130 մլ



Տիքսատորը կրկնակի ան-գամ քսել ու ց հետո մազերը լվանալ :

Մազերի վերջնական մշակում: Կրկնակի ֆիսասցիայից հետո մազերը խնամքով լվանալ և մշակել չեզոքացնող և կայունացնող նյութերով:

Ավարտական փուլում օգտագործվում է ամրացնող նյութ՝ կերատին, որը վայրկեական ամրացնում է մազերը, չեզոքացնում է ֆիզիական նյութերի մնացորդները, մազերը դարձնում է էլաստիկ, նպաստում է ֆիզիական գանգրացման երկարատևությանն ու խոպոպիկների որակյալ լինելուն:

Մազերը խնամքով լվանալուց հետո թերևակի չորացնել և համաչափ ֆսել համապատասխան նյութերը:

Երեք րոպե հետո մազերը լվանալ՝

օգտագործելով բալզամ-պարգաջրիչ,

որը կվերականգնի մազերի և մաշկի բնական թրվային ցուցիչ «pH-ը» և կհեռացնի սանրումը:

Քիմիական գանգրացման իրականացման ձևերը


Քիմիական գանգրացման իրականացումը հյուսքերի և կոկլյուշների մջոցով

Թաց մազերը բաժանում են գոտիների: Հյուսքերի առաջին շարքի լայնությունը պետք է լինի 5 սմ/նկ. ա, բ/: Հյուսքերի քանակը կախված է մազերի խտությունից, հաստությունից՝ 2- 2,5 սմ/: Մազերը ձիգ հյուսում են, ծայրերը չեն կապում, այլ փաթաթում են կոկլյուշների վրա և ամրացնում նկուն ժապավենով /նկ. գ,դ/: Հյուսքերի առաջին շարքի լայնությունը պետք է լինի առաջինից ֆիչ լայն, իսկ երրորդը՝ երկրորդից լայն: Այսպես շարքը շարքի հետևից՝ մինչև ծոծրակի վերին մասը: Քունգակողմային և գագաթային հատվածների մազափնջերը հանգուցվում են ավելի հաստ հյուսքերով /3- 3, 5 սմ/:

Երբ արդեն ամբողջ մազերը հյուսված են և ծայրերն էլ փաթաթված են կոկլյուշների վրա, դրանք երկու կողմերից լավ թաթախում են ֆիմիական բաղադրությամբ, պահում 15-20 րոպե՝ կախված մազերի վիճակից և կառուցվածքից: Այնուհետև կոկլյուշներով հյուսքերը խնամքով լվանում են 50-60°C ջրով, վրան ֆուն ֆիֆսաժ, պահելով 10 րոպե: Հաջորդիվ ֆիֆսաժը լվանում են, կոկլյուշները հանում, հյուսքերը քանդում և մազերը կրկին լվանում:

Մազերը չեզոքացնում են բուժական էմուլսիայով, սանրում խոշոր ատամներ ունեցող սանրով: Մազերը չորացնում են բնական ֆանապարեիով կամ վարսահարդարիչի միջոցով: Այս համակցված մեթոդն առաջարկվում է մազերը վարսափաթաթուկով չփաթաթողներին:

Սանրվածքը լինում է բնական, խոպոպներն էլ՝ խոշոր:



Արմատայ ի ն քիմիական գանգրացում

Այս միջոցը կիրառվում է մազերին փաթաթում և խիտ տեսք հաղորդելու և դրանց հարդարումը հեշտացնելու նպատակով: Այս մեթոդը հարմար է կիրառել այն սանրվածքների ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում մազարմատների հատվածում ծավալը մեծացնել:

Արմատային ֆիմիական գանգրացման էությունը կայանում է նրանում, որ գանգրացնում են ոչ բոլոր մազերը, այլ դրանց մի մասը՝ մազարմատների հատվածները՝ թողնելով ծայրերն առանց ֆիմիական գանգրացման կամ պահպանելով նախորդ գանգրացումը:

Գանգրացումը կարելի է սկսել գլխի ցանկացած հատվածից: Սակայն պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը. եթե մազերը նախկինում ենթարկվել են ֆիմիական գանգրացման, ապա կոկլյուշները սկսում են փաթաթել՝ մազի ահաժ հատվածից վերցնելով 2 սմ: Օրինակ՝ եթե մազերն

անել են 8 սմ-ով, ապա կոկլյուսները փաթաթում են 10 սմ մագարմատներից սկսած /ահած 8 սմ + նախկինում գանգրացված 2 սմ/: Մագափունջը

կոկլյուսի շուրջը փաթաթում են կիսաուրածև: Հնդ որում՝ մագի ծայրերը գտնվում են ձախ ձեռքում, իսկ աջում՝ մագի այն մասը, որը պետք է փաթաթվի կոկլյուսի վրա: Կատարելով մի քանի պտույտներ մագարմատների ուղղությամբ՝ կոկլյուսն ամրացնում են ճկուն ժապավենով/ուեզինով/: Այս ձևով փաթաթում են բոլոր մագափնջերը և անցնում հաջորդ փուլին, այն է՝ մեակում նյութերով: Յուրաֆանջյուր կոկլյուսի վրա քսում են ֆիմիական լուծույթը, բայց այնպես, որ այն չընկնի ծայրերի վրա: Պահելու ժամկետը 10-ից 20 րոպե՝ կախված մագի կառուցվածքից: Մնացած փուլերը նույնն են, ինչ որ դասականի ժամանակ:

Պարուրած և քիմիական գանգրացում

Գոյություն ունի պարուրած և ֆիմիական գանգրացման երկու տեսակ: Առաջին տեսակը սկսում են ծոծրակային ներքևի գոտուց: Մագափունջը առանձնացնում են ֆառակուսու ձևով, այն պարանման փաթաթում են իր առանցքի շուրջը և պարուրածև տեղավորում կոկլյուսի վրա՝ մագերի ուրբաններն իրար կիպ դասավորելով: Մագափնջի ուրբանն և կոկլյուսի պտտման ուղղությունները պետք է համապատասխանեն:

Երկրորդ տեսակը սկսում են ծոծրակային ներքևի հատվածից: Մագափունջն առանձնացնում են ֆառակուսու ձևով, սակայն պարանման չեն ուրբան: Միայն պարուրածև տեղավորում են կոկլյուսի վրա՝ մագերի ուրբաններն իրար կիպ դասավորելով:

Այնուհետև իրականացնում են ֆիմիական գանգրացման բոլոր փուլերը:

Քիմիական գանգրացում «գոֆրե»

Գանգրացումն սկսում են ծոծրակային ներքևի հատվածից: Մագափունջն առանձնացնում են ֆառակուսու ձևով և փաթաթում ուրածև: Այսպիսի գանգուրներ են ստացվում նաև «հյուսվերով» ֆիմիական գանգրացման ժամանակ:



Քիմիական գանգրացում «բոլմերանգ»

Այս գանգրացման արդյունքում ստացվում են ծավալային խոպոպներ: Կոկլյուսները փաթաթում են շախմատային կարգով: Մագափնջի լայնությունը չպետք է գերազանցի կոկլյուսի տրամագիծը: Մնացած փուլերը նույնն են, ինչ որ դասականի ժամանակ:



Գործնական աշխատանք

Թեմա 2.4 Աշխատանքի ավարտական գործողություններ:

Գանգրացված մագերի խնամքը

Ցանկալի չէ մագերը սանրել գանգրացման օրը /իսկ եթե այնուամենայնիվ սանրում են, ապա լայն ատամներ ունեցող սանրով/, քանի որ դրանք շատ զգայուն են և ավելորդ անգամ դրանք վնասել չարժեն: Գլու- խը պետք է լվանալ գանգրացումից երեք օր հետո: Խորհուրդ չի տրվում մագերը չափից շատ չորացնել: Հարկավոր է օգտագործել հատուկ սնու- ցող վիրվրոսոններ, պարզաջրիչներ, բալզամներ, որոնք նախատեսված են գանգրացված մագերի համար:

Գործնական աշխատանք

Կատարել ֆինիսյան գանգրացում՝ ըստ հրահանգների: